ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2027 թվականի բյուջեի ձևավորումը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2027 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն ձևավորվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով, և ավելացնելով հանձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսերը: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման, տեխնիկական հագեցվածության, հաձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ բյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն (բացառությամբ հաձնաժողովի լիազորությունների ապահովման նպատակով իրականացվող (իրականացվելիք) գործառույթների, ծրագրերի և միջոցառումների, առանձնահատուկ դեպքերում կապիտալ ծախսերի կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված նպատակային ծախսեր) ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Ծրագրի անվանումը՝ **հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում** Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումները՝	Գումարը (հազ. դրամ)
1. Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում	**1 061 122.5**
Ընթացիկ ծախսեր, այդ թվում	
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	954 112.8
Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ներքին և արտասահմանյան գործուղումների, անդամավճարների, հարկերի և պարտադիր վճարների համար նախատեսված ծախսեր	107 009.7
2. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում	**6 996.0**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ այդ թվում	
Վարչական սարքավորումներ	6996.0
Ընդամենը ծախսեր	**1 068 118.5**
3. Էներգետիկայի բնագավառում նախորդ տարվա ընթացքում իրականացված ներդրումների տեխնիկական աուդիտի իրականացում	**151131.3**
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐ	**1 219 249.8**